

DOI: 10.59560/18291155-2023.2-75



ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՀՀ սահմանադրական դատարանի
նախագահի օգնական,
իրավաբանական գիտությունների թեկնածու*



ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*ՀՀ սահմանադրական դատարանի
նախագահի օգնական,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

**ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՆՁԵՌՆԵՄԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ
ՄԵՌՆՈ՞Ղ, ԹԵ՞ ԺՈՂՈՎՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔԻ
ԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՆՍՏԻՏՈՒՏ¹**

Ամփոփագիր

Հոդվածում բացահայտվում է պատգամավորական անձեռնմխելիության ինստիտուտի դերն ու նշանակությունը: Հեղինակները քննադատաբար են մոտենում հարցին, թե պատգամավորական անձեռնմխելիության ինստիտուտը կորցնում է իր դերը երկրների «ժողովրդավարացմանը» զուգահեռ:

Հոդվածում բացահայտվում է պատգամավորական անձեռնմխելիության ինստիտուտի ծագումնաբանությունը և փորձ է արվում ներկայացնել պատգամավորական անձեռնմխելիության և ժողովրդի քաղաքական կամքի իրացման կապը:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳՊԿ ֆինանսական աջակցությամբ (հետազոտական ծրագիր թիվ 22YR-5E006):

Հիմնաբառեր. պատգամավորական անձեռնմխելիություն, ժողովրդի քաղաքական կամք, քրեական հետապնդում:

1. Ներածություն

Ցանկացած ժողովրդավարության հիմքում ընկած է այն գաղափարը, որ ժողովուրդն է հանդիսանում *իշխանության կրողն ու տերը, հատկանիշ, որը ժամանակակից իրավական պետության իմանենք տարրերից է:*

Իր հերթին, եթե ելնենք «պետություն» և «ժողովուրդ» հասկացությունների սերտ կապի բնույթից և առաջինի այն տարածված բնորոշումից, որ «պետությունը նույն ճակատագրով կապված մարդկանց քաղաքական միավորումն է»¹, ապա ժողովուրդ հասկացությունն էլ պետք է բնորոշել իբրև կոնկրետ *պետության բոլոր քաղաքացիների* միավորում, որի կյանքն ու ապագան ուղղակիորեն կախված է տվյալ (ժողովրդի ստեղծած) պետության կողմից վարվող *ներքին և արտաքին քաղաքականությունից:*

Ժողովրդի նման բնորոշումը հստակ ցույց է տալիս ժողովրդի ներկայի և ապագայի կապը պետության քաղաքականությունից (ներքին և արտաքին): Ուստիև *ժողովուրդը պետք է ունենա պետության՝ իր կյանքի և ապագայի վրա ուղիղ առնչվող, ազդեցություն ունեցող ներքին և արտաքին քաղաքականության վրա ազդեցություն ունենալու հնարավորություն:*

Պետության կողմից վարվող ներքին և արտաքին քաղաքականության վրա ժողովրդի ընդհանուր ազդեցությունը արտահայտվում է առաջին հերթին ժողովրդի *քաղաքական կամքի ձևավորմամբ* և երկրորդ՝ *դրա արտահայտմամբ:*

Ժողովրդի քաղաքական կամքի *ձևավորման* գործոնները բազմաբնույթ և բազմատեսակ են. մի դեպքում դրանք ապահովվում են առանձին *անձանց* սուբյեկտիվ հիմնական իրավունքներով (տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, կարծիքի արտահայտման ազատությունը, հավաքների ազատությունը, միավորումների ազատությունը և

¹ St'у Государственное право Германии. Сокращенный перевод немецкого семитомного издания. Т. 1 / Отв. ред.: **Топорнин Б.Н.** - М.: Изд-во ИГиП РАН, 1994, էջ 35: Այս միտքը, որոշակի այլ երանգներով կրկնվում է նաև ֆրանսիացի իրավաբանների շրջանակներում, տե՛ս, օրինակ, **Матьё Б.** Право против демократии? Монография / Б. Матьё, пер. с франц. Я. И. Лебедевой, под ред. А. И. Ковлера. — Москва: Норма: ИНФРА-М, 2021, էջ 61:

ՍԱՀՄԱՆԱՎՈՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 2(110)2023

այլն), երկրորդ դեպքում, օրինակ, քաղաքացիներին վերապահված կուսակցություն ստեղծելու և դրան անդամագրվելու իրավունքով, երրորդ դեպքում՝ պետության կողմից իբրև սահմանադրական կարգի հիմունք ամրագրելով գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգի երաշխավորումը, չորրորդ դեպքում, որոշակի այլ հարթությունում, օրինակ, պետության կողմից կյանքի անհրաժեշտ նվազագույն պայմանների և ժողովրդի կրթական համապատասխան մակարդակի ստեղծմամբ:

Այս առումով տեղին է հիշել ֆրանսիացի սահմանադրագետ Բ. Մալյոյի այն խոսքերը, որ. «... կենսապայմանները և հատկապես կրթության նվազագույն մակարդակը անհրաժեշտ պայմաններ են ստեղծում անհրաժեշտ տեղեկատվություն ունեցող քաղաքացիների կամքի ազատ արտահայտման համար»¹:

Արդյունքում, բազմաբնույթ և բազմաշերտ գործոնների ազդեցությամբ ձևավորված ժողովրդի քաղաքական կամքն իր արտացոլումն է գտնում ընտրություններում՝ կուսակցությունների (դաշինքների) ներկայացրած ծրագրային-գաղափարախոսական հայացքների հիման վրա (ընտրությունների արդյունքում արտացոլված (որպես կանոն) համամասնությամբ) պետական իշխանության մարմինների ձևավորմամբ², որոնք էլ արդեն *պետք է անշեղորեն իրացնեն ժողովրդի արտահայտած քաղաքական կամքը*: Ժողովրդի արտահայտած քաղաքական կամքը, հատկապես խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող երկրներում, գլխավորապես *իրացվում է* ընտրությունների արդյունքներում խորհրդարանի *մեծամասնությունը ձևավորած քաղաքական ուժի (դաշինքի) կողմից՝ մեծամասնության կառավարմամբ*:

Մեծամասնության կառավարմամբ *իրացվող ժողովրդի քաղաքական կամքը*, սակայն, ժողովրդավարության *ձևական կողմն է*, որը ժողովրդավարության համար, սակայն, ամենևին ինքնաբավ չէ: Անհրաժեշտ է, որպեսզի

¹ Ст'ю Матье Б., նշվ.աշ., էջեր 67-68:

² ՀՀ Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի հունիսի 30-ի ՍԴՈ-810 որոշմամբ նշել է, որ ժողովուրդը, ընտրությունների միջոցով որոշելով, թե խորհրդարանը քաղաքական ուժերի ինչպիսի հարաբերակցությամբ պետք է աշխատի, դրանով իսկ օրենսդիր մարմնին պատվիրակում է իրականացնել օրենսդրական գործունեություն՝ իր իսկ նախընտրած քաղաքական կողմնորոշումներին համապատասխան:

ընտրությունների արդյունքում ձևավորված մեծամասնության կառավարումն իրականացվի՝ հաշվի առնելով ժողովրդի անփոփոխ շահերը, մյուս կողմից՝ չնսեմացնի փոքրամասնության շահերը, մեծամասնության կառավարման գործընթացը չիրականացվի մարդու իրավունքների խախտումներով, ապահովվի իրավունքի գերակայություն:

Հակառակի դեպքում մեծամասնության կառավարման և ժողովրդի արտահայտած քաղաքական կամքի միջև կառաջանան խզվածքներ, կամ այդպիսի կառավարումն ընդհանրապես կկտրվի ժողովրդից՝ վերաճելով բռնակալության՝ մեծամասնության բռնակալության: Սույն հոդվածում քննարկվել է պատգամավորի ինստիտուտի նշանակությունը ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման համատեքստում, բացահայտվելու է մեծամասնության կառավարումը «մեծամասնության բռնակալության» վերաճելու պատգամավորի անձեռնմխելիության ինստիտուտի կանխարգելող դերը, առաջարկվելու են որոշ լուծումներ՝ ուղղված պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու գործընթացն առավել օբյեկտիվ դարձնելուն, ինչպես նաև այդ հարցը «զուտ մեծամասնության քաղաքական որոշմամբ» չպայմանավորելուն:

2(110)2023

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

2. Պատգամավորի անձեռնմխելիությունն իբրև «մեծամասնության բռնակալության» կանխարգելող երաշխիք

2.1. Ընդհանուր դրույթներ

Ժողովրդավարության ձևական կողմից՝ «մեծամասնության կառավարումից», դեպի «մեծամասնության բռնակալություն» սահմանը շատ փխրուն է: Այն չհատելու համար անհրաժեշտ է ժողովրդավարության իրացման, դրսևորման արտաքին, *ձևական* կողմը՝ մեծամասնության կառավարումը, և *նյութական կողմը՝ կառավարման գործընթացում* համընդհանուր հանրային բարձր շահերով առաջնորդվելը, մարդու հիմնական իրավունքների հաշվառումը *ճիշտ հավասարակշռություն ստանան:*

Հարցի առնչությամբ հիշատակման են արժանի Ա. Բարակի հետևյալ տողերը. «... Ժողովրդավարությունը նաև հիմնարար արժեքների և մարդու

իրավունքների գերակայություն է, այն ձևով, որով դրանք ամրագրված են սահմանադրությամբ: *Ժողովրդավարությունը մեծամասնությանը կառավարող հասարակության հիմնական արժեքների և մեծամասնության կառավարման միջև նուրբ հավասարակշռություն է: Իրականում ժողովրդավարությունը միայն «ձևական» ժողովրդավարությունը չէ (որը կապված է մեծամասնության կառավարմանը հանգեցնող ընտրական գործընթացի հետ): Ժողովրդավարությունը նաև «նյութական» ժողովրդավարությունն է (որը կապված է մարդու՝ որպես անհատի իրավունքների պաշտպանության հետ): ... Ժողովրդավարությունը վնասվում է, երբ մեծամասնությունը մերժում է փոքրամասնության հիմնական իրավունքները: ... Հեռացրեք մեծամասնության կառավարման կանոնը սահմանադրական ժողովրդավարությունից և դուք հարված կհասցնեք դրա էությանը: Հեռացրեք հիմնական արժեքների կանոնը սահմանադրական ժողովրդավարությունից և դուք կհարվածեք դրա գոյությանը»¹:*

Ուստիև ժողովրդավարության հիմքում ընկած «մեծամասնության կառավարումը» «մեծամասնության բռնակալության» (այս թվում՝ նույն մեծամասնության ներսում բռնակալության) չվերաճելու համար անհրաժեշտ է, որ մեծամասնությունը որոշումներ կայացնելիս ելնի ոչ թե նեղ անձնային, կուսակցական, այսօրեական շահերից, այլ՝ հիմք ընդունի հարաբերական, անփոփոխ բարձր հանրային շահը (արժեքը), չնսեմացնի կամ անտեսի ժողովրդի քաղաքական կամքի նաև այն արտահայտությունը, որն իր արտացոլումն է գրել ընտրությունների արդյունքում ձևավորված քաղաքական փոքրամասնության կողմից ներկայացվող ծրագրային-գաղափարախոսական կողմնորոշումներում և մոտեցումներում, ինչպես նաև այդ փոքրամասնության կազմի (անձնավորված կազմի) մեջ»²:

¹ Տե՛ս **Barak A.**, *The Judge in a Democracy*. [edition unavailable]. Princeton University Press. 2009: Հասանելի <https://www.perlego.com/book/734391/the-judge-in-a-democracy-pdf> (Վերջին մուտքը՝ 28 մարտի 2023 թ.), այստեղ նաև մանրամասն տե՛ս ժողովրդավարության ձևական և նյութական ասպեկտների մասին:

² Այս առնչությամբ տեղին է հիշատակել ՀՀ Սահմանադրական դատարանի այն դիրքորոշումը, թե որ դեպքում քաղաքական մեծամասնության կայացրած որոշումները կարող են դիտարկվել իբրև ժողովրդի կամքն արտահայտող: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է, որ մեծամասնությունը պետական իշխանություն իրականացնելիս

Սակայն, հարց է առաջանում, իսկ եթե ժողովրդավարության ձևական և նյութական կողմերի կենսական անհրաժեշտ այդ հավասարաշոյունը խախտվի՞ և մեծամասնության կառավարումը կտրվի այդ արժեքային հենքից:

Չէ՞ որ գործնականում պակաս չեն օրինակները, երբ մեծամասնությունը որոշումներ կայացնելիս ելնում է նեղ կուսակցական, անձնային, այսրուպեական շահերից¹, երբ քաղաքական մեծամասնության որոշումներով տեղ են գտել հիմնական իրավունքների խախտումներ², երբ (այդ թվում մի շարք եվրոպական երկրներում) քաղաքական մեծամասնությունը, գործելով «ժողովրդի անունից» և «հանուն Ժողովրդի», հարվածներ է հասցնում իրավունքի գերակայությանը (օրինակ հարվածներ հասցնում դրա տարրերից մեկին՝

որոշումների կայացման գործընթացում պետք է ելնի նաև որոշակիացված մնայուն (անփոփոխ) հանրային շահից (բարիքից), հարգի փոքրամասնության իրավունքները՝ հաշվի առնելով նաև նրա շահերը՝ մասնավորապես՝ չնվազեցնելով և չզրկելով ապագայում փոքրամասնությանը մեծամասնություն դառնալու իրավունքից, որպիսի պայմաններում մեծամասնության որոշումը կարող է դիտարկվել իբրև ժողովրդի կամքն արտացոլող, տե՛ս 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴԻ-1647 որոշումը, 4.1 կետ:

Այս մոտեցմանը հարող դիրքորոշումներ արտահայտել է նաև ՄԻԵԴ-ը: Որոշակի այլ հարցերի առնչությամբ «ժողովրդավարական հասարակության» հատկանիշներին անդրադառնալով՝ ՄԻԵԴ-ն իր վճիռներում նշել է, որ բազմակարծությունը, հանդուրժողականությունը և տեսակետների լայնությունը «ժողովրդավարական հասարակության» հատկանիշներ են: ՄԻԵԴ-ը նկատել է, որ թեև անհատական շահերը երբեմն պետք է ստորադասվեն խմբի շահերին, ժողովրդավարությունը պարզապես չի նշանակում, որ մեծամասնության կարծիքները միշտ պետք է գերակշռեն. պետք է ձեռք բերվի հավասարակշռություն, որը կերաշխավորի փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ արդար և պատշաճ վերաբերմունքը և կբացառի մեծամասնության գերիշխող դիրքի ցանկացած չարաշահում (see, mutatis mutandis, Young, James and Webster v. the United Kingdom, judgment of 13 August 1981, Series A no. 44, p. 25, § 63, and Chassagnou and Others v. France [GC], nos. 25088/94, 28331/95 and 28443/95, § 112, ECHR 1999 III): Իր մի շարք այլ վճիռներում ՄԻԵԴ-ը նաև արձանագրել է, որ բազմակարծությունը և ժողովրդավարությունը նույնպես պետք է հիմնված լինեն երկխոսության և փոխզիջման ոգու վրա, որն անխուսափելիորեն ենթադրում է տարբեր գիշումներ անհատների կամ անհատների խմբերի կողմից, որոնք արդարացված են ժողովրդավարական հասարակության իդեալներն ու արժեքները պահպանելու և առաջ տանելու համար (տե՛ս, mutatis mutandis, the United Communist Party of Turkey and Others, վճիռը, § 45, և Refah Partisi (the Welfare Party) and Others, վճիռը § 99):

¹ Այդպիսի բազում օրինակներ Հարավային Ամերիկայի երկրների և հատկապես Բրազիլիայի վերաբերությամբ տե՛ս, օրինակ, Weyland, K. (1996) Democracy Without Equity. [edition unavailable]. University of Pittsburgh Press. Available at: <https://www.perlego.com/book/3847269/democracy-without-equity-failures-of-reform-in-brazil-pdf> (Accessed: 9 April 2023), էջեր 57-58, 72-74:

² Տե՛ս Klatt M., Democracy in 2030. In C. Bezemek (Ed.). Constitutionalism 2030, Oxford: Hart Publishing, 2022, էջ 14:

խախտելով դատական իշխանության անկախությունը): Ավելին, հաշվի առնելով քաղաքական իշխանության և քրեական հետապնդման ինստիտուցիոնալ մարմնի՝ դատախազության տեսանելի (նաև անտեսանելի կապերը²)՝ այդ բռնակալությունը կարող է ստանալ ծայրահեղ այլանդակ դրսևորումներ՝ քաղաքական շարժառիթներով քրեական հետապնդումների հարուցման տեսքով:

Ուստի նման վտանգներին գործնական բախումները մի կարևոր հարցի են հանգեցնում. կա՞ն արդյոք ժողովրդավարության ձևական և նյութական կողմերի այդ կարևորագույն հավասարակշռությունն ապահովող երաշխիքներ:

Եվ պատգամավորի անձեռնմխելիության ինստիտուտը հանդես է գալիս իբրև այդպիսի երաշխիք: Այն, չնայած այդ ինստիտուտի ընդհանուր

¹ Տե՛ս **Blokker P.**, Populism as a constitutional project. *International Journal of Constitutional Law* 17 (2), 2019., էջեր 536–553. doi: 10.1093/icon/moz028., **Doyle O., Walsh R.**, Deliberative Mini-Publics as a Response to Populist Democratic Backsliding. In *Constitutional change and popular sovereignty: Populism, politics and the law in Ireland*, Hrsg. Maria Cahill, Colm O’Cinneide, Seán ÓConaill und Conor O’Mahony, London, New York: Routledge, 2021, էջեր 224–243: Դրանցից մեկն էլ այս տողերը գրելու օրերին Իսրայելում տեղի ունեցող զանգվածային բողոքի ակցիաներն էին ընդդեմ այն օրինագծի, որով նախատեսվում էր Գերագույն դատարանի լիազորությունների կրճատում, ինչպես նաև իշխանության գործադիր ճյուղին էր վերապահվում դատավորների ընտրության գործընթացում որոշակի հսկողական գործառույթ:

² Այս առումով ցայտուն օրինակ է Ֆրանսիական նախագահական ընտրությունների դատախազության դրսևորած որոշակի քաղաքական կողմնակալությունը: Մասնավորապես Ֆրանսիայի նախկին նախագահ Ն. Սարկոզիի քաղաքական հակառակորդ Դոմինիկ դե Վիլպենը, մեղադրվելով սուտ մատնության մեջ, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ամբողջովին արդարացվում է և հնարավորություն ունենում մասնակցել 2012-ի նախագահական քարոզարշավին: Սակայն դատախազությունը, արդարադատության նախարարի ցուցումով, բողոքարկում է արդարացման դատավճիռը Փարիզի վերաքննիչ դատարան: Քաղաքական գործով դատախազության կողմից արդարացման դատավճիռի բողոքարկումը լուրջ բանավեճ է առաջացրել իրավաբանական հանրության շրջանում դատախազության անաչառության վերաբերյալ, քանի որ խախտվել էր դատախազության քաղաքական անկախության ապահովմանն ուղղված այն երաշխիքային նշանակություն ունեցող ավանդույթը, ըստ որի *արդարադատության նախարարին արգելվում էր դատախազությանը կոնկրետ գործով ցուցումներ տալը:* Կոնկրետ այդ դեպքում նման ցուցում էր տեղ գտել, ինչ էլ, որպես հետևանք հանգեցրել էր դատական ակտի բողոքարկմանը: Իրավաբանական հանրությունում այս հարցի շուրջ առաջացած լուրջ մտահոգությունները դատախազության կողմնակալության և քաղաքական անկախության մասով հիմք հանդիսացան արգելակելու ավանդական ֆրանսիական դատական նախաքննությունը վերացնելուն ուղղված սկսված գործընթացը: Այս մասին մանրամասն տե՛ս **Мельников Е.А.** Уголовное преследование в условиях действия системы разделения властей (досудебное производство): дисс. ...канд. юрид. наук. - Москва, 2017, էջեր 68-69:

թերություններին¹ (և դրանցով պայմանավորված ինստիտուտի մասին դա-
րերով² հնչող քննադատությանը)³, հանդիսանում է *ժողովրդի արդահայրած
քաղաքական կամքի իրացումն ապահովող երաշխիք* և «մեծամասնության
բռնակալության» *չեզոքացման երաշխիք*:

¹ Դրանցից մեկը այսպես կոչված «իմունիտետի դիլեման է», երբ պատգամավորի անձեռն-
մխելիության անհրաժեշտությունն ի հայտ է գալիս հատկապես ոչ զարգացած,
ժողովրդավարության ցածր մակարդակ ունեցող երկրներում, որտեղ առավել մեծ է քրեական
հետապնդմամբ քաղաքական հակառակորդների «ենթարկեցնել-վախեցնելու» ռիսկերը: Մյուս
կողմից, հենց այդ տեսակ երկրներում ուղիղ համեմատական աճում են պատգամավորական
անձեռնմխելիության չարաշահման ռիսկերը, որպես արդյունք՝ այն վերաճում է անձնական
արտոնության և հանդիսանում այլոց հիմնական իրավունքների՝ մասնավորապես արդար
դատաքննության իրավունքի խախտման պատճառ: Այս մասին մանրամասն տե՛ս **Hardt S.,**
Parliamentary immunity: a comprehensive study of the systems of parliamentary immunity of the
United Kingdom, France, and the Netherlands in a European context. Maastricht University, (2013), էջ
6-7:

² Պատգամավորի անձեռնմխելիության ինստիտուտի բացասական կողմերը նոր չեն զգացվել,
դրանք իրավաբանական հանրությունում ունեն ոչ թե մեկ, այլ մի քանի հարյուրամյակների (SIC!)
պատմություն: Այս առումով շատ արտահայտիչ են մասնավորապես 1790-ականների վերջերին
Հերոլդ-Սեշելի խոսքերը, ով, ներկայացնելով ֆրանսիական սահմանադրության 1793 թ.
Նախագիծը, նշում էր. «Հանրային պաշտոնատար անձինք պատասխանատու են, իսկ ահա
ժողովրդի հիմնական լիազոր ներկայացուցիչները, չգիտես ինչու անպատասխանատու են: Իբրև
թե ներկայացուցիչը կարող է այլոցից տարբերվել որևէ այլ բանով, քան իր
պարտականություններով և հայրենիքի հանդեպ իր ունեցած պարտքի առավել խստորեն
իրականացմամբ. սակայն, ոչ մի բողոք, ոչ մի դատարան նրան չի կարող դիպչել: Անոթ կլինի
ասել, որ նա անպատիժ է, և նրան անվանեցին ա ն ձ ե n ն մ խ ե լ ի»: Մեջբերումն ըստ՝ **Эсмен А.**
Общие основания конституционного права. Пер. с фр. под ред. проф. В. Дерюжинского. – Санкт-
Петербург, 1898, էջ 227:

³ Վենետիկի հանձնաժողովը, օրինակ, այսպես կոչված «զարգացած ժողովրդավարության
երկրներում» ինստիտուտի անհրաժեշտությունը չի տեսնում, այս առնչությամբ նշելով.
«Հաստատված ժողովրդավարական համակարգում քիչ հավանական է, որ կառավարությունը
փորձի հարձակվել խորհրդարանի՝ որպես ինստիտուտի, աշխատանքի վրա՝ չհիմնավորված
քրեական մեղադրանքներ առաջադրելով նրա անդամների դեմ, և եթե այդպիսի բան էլ
կատարվի, ապա խորհրդարանը՝ իբրև ինստիտուտ, որպես կանոն ունենում է շատ ավելի լավ և
ավելի արդյունավետ պաշտպանության միջոցներ, քան քրեական հետապնդման
անձեռնմխելիությանն ապավինելն է: Բացի այդ, ցանկացած լավ գործող ժողովրդավարական
[համակարգերում Հեղ.] առկա են նաև իրավական և քաղաքական նորմեր և ստանդարտներ,
որոնք արդյունավետ կերպով խոչընդոտում են քաղաքական մեծամասնությանը քրեաիրավական
համակարգն առանձին քաղաքական ընդդիմախոսների նկատմամբ չարաշահելուց: Դատական
իշխանության և դատախազական մարմինների անկախության և անկողմնակալության
կանոններն ու սկզբունքներն այս առումով շատ ավելի կարևոր և արդիական են, քան
պատգամավորների անձեռնմխելիության մասին հին կանոնները», տե՛ս Եվրախորհրդի
«ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի CDL-AD(2014)011
զեկույցի 153-րդ կետը ([https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2014\)011-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2014)011-e)):

Ընդ որում երաշխիք, որը մեր գնահատմամբ, հավասարապես անհրաժեշտ է ինչպես այսպես կոչված «զարգացած ժողովրդավարության», այնպես էլ «զարգացող ժողովրդավարության երկրներում»:

2.2. Պատգամավորի անձեռնմխելիությունը՝ իբրև ժողովրդի ապանձնավորված քաղաքական կամքի իրացման և (այդ թվում՝ մեծամասնության «ներսում») պատգամավորի ազատ մանդատի իրացման երաշխիք

Ներկայացուցչական ժողովրդավարության պայմաններում ընտրությունների արդյունքների հիման վրա քաղաքական կուսակցությունների (դաշինքների) ցանկով պատգամավոր դարձած անձը հանդես է գալիս *ոչ թե իբրև կոնկրետ կուսակցության կամ կոնկրետ դաշինքին ընտրողների, այլ հենց ժողովրդի ներկայացուցիչ*, ուստի, հենց ինքը պատգամավորը պետք է ունենա իր կուսակցության (դաշինքի) հետապնդած շահերի և ժողովրդի, որպես ամբողջության հարատև շահերի գնահատման հնարավորություն, իսկ դրանց հակադրության մասին եզրահանգման գալու դեպքում վերջինս պետք է ունենա ժողովրդի այդ շահերի ներկայացման, սպասարկման հնարավորություն:

Այսինքն նման հակադրության մասին եզրահանգման առկայության դեպքում մեծամասնության «ներսում» գտնվող պատգամավորն անգամ մեծամասնության ճնշմանը չընկրկելու համար պետք է կարող և ունակ լինի արտահայտել և պաշտպանել ժողովրդի բարձր շահերը, և ոչ թե տուրք տալ նեղ կուսակցական շահերին մեծամասնության շահերին:

Հետևապես, ելնելով այն կանխադրություններից, որ. 1) ժողովուրդն ապանձնավորված հասկացություն է, 2) պատգամավորը ոչ իր ընտրողի, այլ իշխանության սկզբնաղբյուրի՝ ժողովրդի ներկայացուցիչն է, 3) և այդ ներկայացուցիչ-պատգամավորն իր ներկայացուցչական գործունեությունը պետք է իրացնի *ինքնավար* կերպով՝ *ազատ մանդատի հիման վրա՝ ուստիև պատգամավորի ազատ գործելու հնարավորությունը կարող է ապահովվել, երբ պատգամավորն իր գործունեությունն իրականացնի արտաքին միջամտության և նրա կամքի ձևավորման վրա ազդեցություն ունեցող փարապետակ խեղաթյուրումներից զերծ միջավայրում:*

Ժողովրդի ներկայացուցչի ինքնավար գործելու դեպքում է, որ պարզամավորը հնարավորություն կստանա գործելու բարերար միջավայրում, որում միայն պարզամավորի գործունեությամբ արտահայտվող կամքը կարելի կլինի դիտարկել իբրև ապանձնավորված ժողովրդի կամքի անձնավորված փոխարկում:

Պարզամավորի անձեռնմխելիության ինստիտուտը հանդես է գալիս իբրև պարզամավորի ներկայացուցչական գործառույթի արդյունավետ իրականացման երաշխիք՝ ուղղված լինելով ժողովրդի շահերի սպասարկման համար անհրաժեշտ հենց այդ բարերար միջավայրի ապահովմանը:

Ընդ որում, այն արտահայտվում է երկու հարթությունում՝ անձեռնմխելիությունն ապահովում է պարզամավորի «մտքի անկախությունը». նա կաշկանդված չի լինելու իր ներկայացուցչական գործունեության համար քրեական հետապնդման վախերով, ազատվելով իր խոսքի ազատությունը հարկադրված՝ քրեական հետապնդման վախով սահմանափակելու կապանքներից: Բացի այդ, պատգամավորը նաև ազատվում է ապօրինի և անհիմն քրեական հետապնդման հարուցման փաստով վարկաբեկվելու մտավախություններից¹: Այդպիսով, անձեռնմխելիությամբ չեզոքացվում է «պարզամավորի կամքի խեղաթյուրման» վրանգը:

Մյուս կողմից, անձեռնմխելիությունն ապահովում է «արտաքին» հարթությունում «միջամտության» վտանգի չեզոքացումը՝ բացառելով պատգամավորի ներկայացուցչական գործառույթի իրականացմանը արտաքին՝ քրեական հետապնդման բերումով (պատգամավորի *իրավունքների սահմանափակմամբ*) ֆիզիկապես արգելակելու հնարավորությունը:

Այս առնչությամբ հիշատակման է արժանի Բ. Բոնոթը, որը Ֆրանսիայի սահմանադրական իրավունքում անձեռնմխելիության ինստիտուտին նվիրված իր աշխատությունում ներկայացուցիչների (պատգամավորների) անկախության, ինքնավարության այդ պահանջից նույնպես բխեցնում է անձեռնմխելիության ինստիտուտի անհրաժեշտությունը, նշելով, որ, այնքանով, որքանով այդ ինստիտուտները (անձեռնմխելիության և անպատասխանատվության

¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Hardt S.**, նշվ. աշխ., էջ 191:

ինստիտուտները՝ Հեղ.) նախատեսված են հենց այն նպատակով, որ այդ ներկայացուցիչները (հեղինակի խոսքով կառավարողները՝ governing) *չանհանգստանան դատական այն վեճերից, որոնք անպատշաճ են, անհիմն են կամ որոնք հանդիսանում են քաղաքական տարատեսակ մանկրումների հետևանքներ*: Հեղինակն արձանագրում է, որ այս իմաստով սահմանադրական անձեռնմխելիությունները հանդիսանում են միաժամանակ ներկայացուցիչների անկախության և՛ երաշխիք, և՛ կարևոր պայման¹:

Այսպիսով, պատգամավորի անձեռնմխելիության ինստիտուտն այս լույսի ներքո դիտարկելիս հանդես է գալիս հենց իբրև պատգամավորի *ազատ մանդատի իրացման երաշխիք*: Այն ապահովում է պատգամավորի՝ անվախ և անկաշկանդ իր ներկայացուցչական գործունեությունն իրացնելու հնարավորությունը, դրանով չեզոքացվում են պատգամավորի ներկայացուցչական գործառույթների իրականացմանը խոչընդոտելու վտանգները, այդ կերպ ապահովվում է ժողովրդի ապանձնավորված քաղաքական կամքի իր ներկայացուցչի՝ պատգամավորի միջոցով իրացումը՝ իր հերթին կանխելով կամ չեզոքացնելով մեծամասնության «ներսում» «մեծամասնության բռնակալության» ռիսկերը:

2.3. Պատգամավորի անձեռնմխելիությունը՝ իբրև ժողովրդի անձնավորված քաղաքական կամքի իրացման երաշխիք

Ժողովրդի քաղաքական կամքի ապանձնավորված արտահայտությունը միակը չէ, այն տեղ է գտնում նաև *անձնավորված ձևով*:

Խոսքը մասնավորապես խորհրդարանական ընտրությունների միջոցով ժողովրդի քաղաքական կամքի՝ խորհրդարան անցած ժողովրդի ներկայացուցիչների (պատգամավորի թեկնածուների-ապագա պատգամավորների) *կերպարանքով անձնավորման մասին է*:

Այս առումով գերմանացի անվանի սահմանադրագետները գրում են. «Խորհրդարանական ընտրությունների միջոցով որոշելով յուրաքանչյուր

¹ St'u Bonnotte C., Recherche sur la notion d'immunité en droit constitutionnel français, [s.l.]: the author, 2002 (doctoral thesis, Université de Limoges, unpublished) էջեր 72-73, մեջբերումն ըստ՝ Hardt S., նշվ.աշխ. էջ 175:

առանձին ապագա պատգամավորի ճակատագիրը՝ կայացվում է նաև անհատական որոշում տվյալ պատգամավորի վերաբերյալ¹: Նրանք նշում են, որ «... ընտրությունները, չնայած դրանց գերիշխող նպատակին, հանդիսանում են խորհրդարանի կազմը որոշող, անգամ եթե խոսքը գնում է ցուցակներով ընտրությունների մասին, որն իրենից ներկայացնում է տարբեր անձանց միավորում այս կամ այն կուսակցության «դրոշի» ներքո, *անգամ այդ ընտրությունները շարունակում են մնալ պատգամավորների հին կազմի վերահաստատման կամ դրա թարմացման ակտեր» (ընդգծումը՝ հեղ.)*²:

Ժողովրդի քաղաքական կամքի արտահայտման այս ասպեկտի կարևորությունն առավելապես սուր է արտահայտվում այսպես կոչված «զարգացող ժողովրդավարությունների» երկրներում, որտեղ քաղաքական, կուսակցական համակարգերի չկայացվածության կամ թերի կայացվածության պատճառով առաջնային պլան է մղվում ոչ թե գաղափարախոսությունը, ծրագրային պատկերացումները, այլ՝ քաղաքական առաջնորդը և նրա հեղինակությունը: Վերաբերելի մասով, վառ օրինակ կարող են հանդիսանալ 2021 թվականին Հայաստանի Հանրապետությունում համայնքային ընտրությունները, որոնց մասնակից կուսակցություններից (դաշինքներից) 13-ն ունեցել են նախկինում տվյալ համայնքում ընտրությանը մեծամասնական ընտրակարգով մասնակցած թեկնածուների անուն-ազգանվան անվանումներ, իսկ այդ անձինք գլխավորել են ցուցակները³ համամասնական ընտրության տակ ըստ էության քողարկելով առաջնորդի մեծամասնական ընտրությունը:

Մյուս կողմից, թեև օրինակը բերվեց Հայաստանի մասով, սակայն, քաղաքականության և քաղաքական կուսակցությունների անձնավորումը ոչ միայն «զարգացող ժողովրդավարության» երկրներին է բնորոշ, այլ ներկա

¹ Տե՛ս Государственное право Германии. Сокращенный перевод с немецкого семитомного издания. Т. 1 / Отв. ред. Топорнин Б.Н. - М.: Изд-во ИГиП РАН, 1994, էջ 122:

² Տե՛ս նշվ. աշխ. էջ 123:

³ Տե՛ս Հակոբյան Լ., Սողոմոնյան Ա., Ռաֆայելյան Վ., Ժողովրդավարությունը և ընտրությունները. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում / Լ. Հակոբյան, Ա. Սողոմոնյան, Վ. Ռաֆայելյան, Եր.: «Հայրապետ» հրատ., 2022, էջ 165:

ժամանակներում այն կրում է *համընդհանուր միտման բնույթ*¹ իր մի շարք դրսևորումներով արտահայտվելով նաև «զարգացած ժողովրդավարության» երկրներում:

Հետևաբար, ժողովրդի քաղաքական կամքի արտահայտման այս անձնավորված ասպեկտը, որը թեև *իդեալական* հարթությունում որոշակի երկրորդային նշանակություն պետք է ստանար, քաղաքական կուսակցությունների համընդհանուր ճգնաժամի², քաղաքականության և քաղաքական կուսակցությունների *անձնավորման* համընդհանուր միտումի պայմաններում ձեռք է բերում *ոչ երկրորդային և կարևոր նշանակություն*:

Հետևապես և ընտրությունների միջոցով ժողովրդի քաղաքական կամքի անձնավորված անխոչընդոտ իրացումը ևս պետք է ոչ պակաս ինտենսիվությամբ՝ պաշտպանվի:

Մեծամասնության բռնակալության ծայրահեղական դրսևորումներից մեկի՝ քաղաքական շարժառիթներով քրեական հետապնդմամբ (և դրա հետևանքով իրավունքների սահմանափակմամբ ուղեկցվող) փոքրամասնության առաջնորդների, նրա ներկայացուցիչների պառլամենտում գործելու փաստացի իրականացման հնարավորությունները սահմանափակելու կամ դրանից ամբողջությամբ զրկելու դեմ կարևոր երաշխիք է պարզամավորի անձեռնմխե-

¹ Քաղաքականության ընդհանրապես և քաղաքական կուսակցությունների անձնավորման համընդհանուր միտումի մասին մանրամասն տե՛ս **Rahat G.**, Party Types in the Age of Personalized Politics. Perspectives on Politics, Cambridge University Press, (2022), էջեր 1-16 (doi:10.1017/S1537592722000366), որտեղ հեղինակը, հիմք ընդունելով թե՛ նորաստեղծ, թե՛ նաև հին կուսակցությունների մոտ առաջ եկող այդ անձնավորման համընդհանուր միտումը, առաջարկում է քաղաքական կուսակցությունների հենց անձնավորման հիմքով դասակարգման տարատեսակ իդեալական տիպեր:

² Բ. Մատյոն այս առումով գրում է. «Չի կարելի հերքել, որ քաղաքական կուսակցությունների ճգնաժամը թուլացնում է կամ վկայում է ներկայացուցչական ժողովրդավարության թուլացման մասին: Քաղաքական ծրագրերի մշակումը փոխանցվում է արտաքին կառույցներին և վերլուծական կենտրոններին, իսկ քաղաքական պատրաստվածությունն ու իրազեկումն ընթանում է այլ խողովակներով: Նույնիսկ Ֆրանսիայում նախագահի թեկնածուներն ունեն կուսակցությունից կուսակցություն անցնելու աճող միտում՝ առաջնորդվելով փրայմերիզների արդյունքներով (ձախակողմյան կուսակցություններում՝ 2012 և 2017 թվականների ընտրություններում կամ աջակողմյան կուսակցություններում՝ 2017 թվականի ընտրություններում): Բացի այդ, քաղաքական կյանքն ավելի ու ավելի ընթանում է ոչ թե ավանդական կուսակցությունների, այլ ավելի քիչ կառուցվածքային կազմավորումների ղեկավարությամբ, որոնք ժամանակավոր են և հաշվի են առնում ներկայիս իրավիճակը, ինչպիսիք են Իսպանիայում «Պոդեմոսը», Իտալիայում «Հինգ աստղերի շարժումը» կամ Ֆրանսիայում «Մար-շե» շարժումը», տե՛ս Матвѐ Б., նշվ. աշխ., էջ 65:

լիության ինստիտուտը: Այն արգելակում է նման հնարավորությունը և ապահովում ժողովրդի անձնավորված քաղաքական անխոչընդոտ իրացումը:

Բացի այդ, չպետք է ուշադրությունից բաց թողնել մեկ այլ, ոչ պակաս կարևոր հանգամանք. ժողովրդի անձնավորված քաղաքական կամքը և անձի պասիվ ընտրական իրավունքը մի մեղալի երկու կողմեր են: Ժողովրդի անձնավորված քաղաքական կամքի իրացումն ապահովվում է անձի պասիվ ընտրական իրավունքի իրացմամբ և հակառակը՝ անձի պասիվ ընտրական իրավունքի իրացմամբ հնարավոր է դառնում ապահովել ժողովրդի քաղաքական կամքի անձնավորումը:

Անձի պասիվ ընտրական իրավունքը ոչ միայն ենթադրում է պառլամենտի ընտրություններին մասնակցության իրավունք, այլ ընտրվելու դեպքում՝ նաև պառլամենտի գործունեությանը մասնակցելու իրավունք¹: Ընտրված ներկայացուցչի՝ պատգամավորի պառլամենտի գործունեության անիրավաչափ սահմանափակումներն իրենց հերթին հանդիսանում են կոնկրետ պատգամավորի պասիվ ընտրական իրավունքի խախտումներ:

Այսպիսով, ելնելով ժողովրդի անձնավորված քաղաքական կամքի արտահայտման և անձի պասիվ ընտրական իրավունքի կապի բնույթից, պետք է արձանագրել, որ ժողովրդի անձնավորված քաղաքական կամքի ոչ պատշաճ պաշտպանությունը խնդրահարույց է դառնում նաև արդեն անձի հիմնական իրավունքների հարթությունում՝ որպես հետևանք հանգեցնելով անձի պասիվ ընտրական իրավունքի հնարավոր խախտման, ուստիև անձեռնմխելիությունը հանդիսանում է նաև կարևոր երաշխիք արդեն անձի պասիվ ընտրական իրավունքի պաշտպանության համար²:

3. Պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու գործընթացի որոշ de lege ferenda երաշխիքներ

¹ Տե՛ս, օրինակ, ՄԻԵԴ Riza and Others v. Bulgaria գործով 2015 թ. հոկտեմբերի 13–ին կայացված վճիռը, կետ 141 (զանգատներ համար 48555/10 և 48377/10):

² ՄԻԵԴ-ը ևս իր որոշումներում ընդգծել է անձի պասիվ ընտրական իրավունքի երաշխավորման հարցում անձեռնմխելիության առանցքային դերը, տե՛ս, օրինակ, ՄԻԵԴ Selahattin Demirtaş V. Turkey (No. 2), GC, Մեծ Պալատի 2020 թ. դեկտեմբերի 22–ի վճիռը, (զանգատ համար 14305/17), կետ 386:

3.1. Ընդհանուր դրույթներ

Ընդհանուր առմամբ համեմատաիրավական փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու լիազորությունը որպես կանոն վերապահվում է հենց պառլամենտին՝ այդպիսով իսկ բացառելով իշխանության գործադիր և դատական ճյուղերի՝ պառլամենտի «գործերին» միջամտությունը (այսպես ապահովելով վերջինիս անկախությունը իշխանության այլ ճյուղերից): Մյուս կողմից՝ պառլամենտի, դատական իշխանությանը ներհատուկ գործառույթներ չկատարելու միտումից ելնելով էլ, պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու չափանիշները կա՛մ խիստ լայն են սահմանվում, կա՛մ դրանք *ընդհանրապես բացակայում են*² (այդպիսով էլ որոշակիորեն ապահովվում է պատգամավորի անմեղության կանխավարկածի հարգումը):

Իր հերթին, պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հստակ չափանիշների բացակայությունը, ինչպես արդեն նշեցինք, ինքնին խնդրահարույց է այդ ինստիտուտի՝ իր նպատակային նշանակությանը ծառայելու տեսանկյունից, քանի որ այդ դեպքերում չի չեզոքացվում «մեծամասնության բռնակալության» վտանգը: Պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցի լուծումն առանց որոշակի օբյեկտիվ չափանիշների, զուտ պառլամենտի ձայների մեծամասնությամբ լուծման մոտեցումը հղի է պատգամավորի անձեռնմխելիության ինստիտուտը զուտ դեկլարատիվ բնույթ կրող «երաշխիքի» վերածվելու վտանգով, քանի որ նման պայմաններում մեծամասնությունն ինքը հնարավորություն է ստանում ազատորեն և միայն իր որոշմամբ «չեզոքացնելու» «մեծամասնության բռնակալությանը» «կապանքները դնող» պատգամավորի անձեռնմխելիությունը:

¹ Բացառությունների թվում են Անդորրան, Կիպրոսը, Չիլին, որոնցում պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցը վերապահված է դատական իշխանությանը:

² Օրինակ, Եվրոպայի խորհրդի կազմում գործող Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը (Group of States against corruption (GRECO) իր 49 երկրներից կեսում արձանագրել էր կա՛մ ընդհանրապես անձեռնմխելիությունից զրկելու չափանիշների բացակայությունը, կա՛մ էլ այդպիսի չափանիշների ոչ ադեկվատությունը: Այս մասին տե՛ս Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի CDL-AD(2014)011 գեկույցի, 129-րդ կետը

([https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2014\)011-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2014)011-e)):

Նման իրավիճակը բացառելու նպատակով կարծում ենք, որ պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու համար պետք է որոշակիորեն օբյեկտիվ չափանիշներ սահմանվեն, որոնց կիրարկումը յուրաքանչյուր կոնկրետ դեպքով (in concreto) թույլ կտա մի կողմից նվազեցնել անձեռնմխելիության ինստիտուտի չարաշահման ռիսկերը, մյուս կողմից՝ անձեռնմխելիությանը ծառայել իր նպատակին՝ դուրս հանելով այն գուտ մեծամասնության քաղաքական որոշմամբ լուծելու տրամաբանությունից, ուստի հողվածի այս մասում կառաջարկվեն որոշակի չափանիշներ-երաշխիքներ, որոնցով այդ գործընթացը որոշակի օբյեկտիվ բնույթ կստանա:

3.2. Պատգամավորին մեղսագրվող հանցագործության և նրա պատգամավորական գործունեության կապի բացակայության չափանիշը

Այս չափանիշն առանցքային է՝ ապահովելու համար պատգամավորի խորհրդարանական գործունեության իրականացումը, բացի այդ դրանով նաև որոշակիորեն չեզոքացվում են պատգամավորական անձեռնմխելիությունը կոնկրետ պատգամավորի անձնական արտոնության վերաճելու ռիսկերը: Ուստի, հիմք ընդունելով անձեռնմխելիության նպատակային նշանակությունը՝ պատգամավորը *չպետք է զրկվի անձեռնմխելիությունից, այն դեպքում, երբ մեղսագրվող հանցավոր արարքը կապված է իր պատգամավորական գործունեության հետ և* կամ հանդիսանում է նրա քաղաքական գործունեության իրականացման միջոց: Օրինակ՝ պատգամավորին մեղսագրվի մի հանցագործություն, որի օբյեկտիվ կողմն ընդգրկի արարքներ, որոնք վերաբերում են նաև անձի կողմից հավաքներին մասնակցելու և քաղաքական թեմաներով հայտարարություններ անելուն, միևնույն ժամանակ դուրս չեն «քաղաքական թեմաների» շրջանակից (օրինակ՝ չեն պարունակում բռնության կոչեր կամ չեն հանդիսանում ահաբեկչության քարոզչություն և այլն)¹:

¹ Վերեբերելի մասով տե՛ս ՄԻԵԴ Selahattin Demirtaş V. Turkey (No. 2), GC, Մեծ Պալատի 2020 թ. դեկտեմբերի 22-ի վճիռը (զանգատ համար 14305/17), կետեր 327-329: «Ահաբեկչության քարոզչության» և իրավաչափ վարքագծի, մասնավորապես՝ «պատմական փաստերին անձի տրված գնահատականի» միջև եղած փխրուն սահմանն ըմբռնելու համար, տե՛ս նույն վճռի 334 կետը:

3.2. Պատգամավորին անձեռնմխելիությունից զրկել հայցող դատախազական (քրեական հետապնդման մարմնի) միջնորդագրին կից ներկայացվող փաստական տվյալների բավարարության չափանիշը

Պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու միջնորդագրին կից դատախազի (քրեական հետապնդման մարմնի) կողմից պետք է ներկայացվեն նաև բավարար փաստական տվյալներ, որոնցով առերևույթ կերպով հիմնավորվում է ենթադրյալ հանցագործության և պատգամավորի օբյեկտիվ կապը:

Բացի այդ, ներկայացված նյութերով պետք է «անկողմնակալ երրորդ դիտորդի չափանիշով» գնահատվի, թե արդյոք կան հիմքեր եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է:

Վերջիններիս բավարար գնահատումը միայն պետք է դիտարկվի իբրև անհրաժեշտ պայման պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցը պառլամենտի կողմից դրական լուծելու համար: Իսկ ահա բացասական պատասխանի դեպքում, պատգամավորի անձեռնմխելիությունը պետք է պահպանվի:

Ընդ որում, այսպեղ անհրաժեշտ է ընդգծել, որ գնահատումն իրականացվի այնպերպ ու այնչափ, որ բացառվի պատգամավորի կողմից հանցանք կատարելու, նրա մեղավորության վերաբերյալ եզրահանգումը, այդպիսով իսկ՝ բացառելու անմեղության կանխավարկածի, ինչպես նաև իշխանությունների բաժանման ու փարանջատման սկզբունքի խախտումը:

3.3. 3.1.-րդ և 3.2.-րդ կետերով նախատեսված չափանիշների և պատգամավորի նկատմամբ հարուցվող քրեական հետապնդման (նրան ազատությունից զրկելու) գործընթացի քաղաքականացվածության գնահատումը իրավաբան գիտնականների կազմից ձևավորված փորձագիտական հանձնաժողովի կողմից

Պատգամավորի անձեռնմխելիության ինստիտուտն իր նպատակային նշանակությանը ծառայելու, վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հարցում քաղաքական մեծամասնության միքայլանի և հնարավոր

միակողմանի որոշման կայացման տրամաբանությունից պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու գործընթացը դուրս բերելու նպատակով գտնում ենք, որ անհրաժեշտ է պառլամենտի կազմում (կամ պառլամենտի հանձնաժողովներից մեկին կից) ձևավորել հատուկ փորձագիտական հանձնաժողով:

Նշված հանձնաժողովը պետք է ձևավորվի իրավաբան գիտնականներից: Հանձնաժողովի կազմը յուրաքանչյուր առանձին գործով նորից ձևավորվելու է հատուկ համակարգչային ծրագրի (որի շահագործման կարգը կսահմանի պառլամենտը) միջոցով՝ դրանով իսկ բացառելով սուբյեկտիվ գործոնները:

Ծրագրում նախապես մուտքագրվելու են այն իրավաբան գիտնականների տվյալները, որոնք ունեն իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի աստիճան և չունեն կուսակցական պատկանելիություն, մասնագիտացած են քրեական և քրեադատավարական իրավունքի ճյուղերում:

Յուրաքանչյուր կոնկրետ գործով համակարգչային ծրագիրն ինքնաշխատ կերպով տվյալների բազայից կընտրի կոնկրետ գործով ձևավորվող հանձնաժողովի անդամներին, որոնք էլ պետք է եզրակացություն տան վերը ներկայացված երկու չափանիշների պահպանվածության և պատգամավորի նկատմամբ հարուցվող քրեական հետապնդման (կամ նրան ազատությունից զրկելու) առերևույթ քաղաքականացվածության առկայության/բացակայության մասին՝ հաշվի առնելով նաև մի շարք հանգամանքներ (օրինակ, պատգամավորին ազատությունից զրկելու միջնորդություն ներկայացվելու դեպքում, հանձնաժողովը քննարկման առարկա կդարձնի ենթադրյալ հանցանքի կատարման ժամանակը, անձի նկատմամբ քրեական հետապնդման և նրա՝ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու միջև ժամանակային խզվածքի առկայությունը¹ և այլն):

¹ ՀՀ սահմանադրական դատարանի՝ իր որոշումներից մեկում անձի նկատմամբ հարուցվող քրեական հետապնդման և հետագայում, դրանից հետո նրա պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու միջև առկա ժամանակային խզումը դիտարկել է իբրև օբյեկտիվ մի հիմք, որը, ըստ էության, բացառում է իրականացվող քրեական հետապնդման պատգամավորի խորհրդարանական գործունեությամբ պայմանավորվածությունը: Մասնավորապես, այդ առնչությամբ Սահմանադրական դատարանը նշել է. Սահմանադրական դատարանը գտնում է, որ անձի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման և հետագայում այդ անձի կողմից պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու միջև ընկած ժամանակային խզումն ինքնին վկայում

Այս տարբերակը ներմուծելու համար անհրաժեշտ է նաև քրեական պատասխանատվություն սահմանել համակարգչային համակարգին ապօրինի միջամտությունների համար՝ այդպիսով իսկ կանխելով հանձնաժողովի անդամներին դրսից «նշանակման» հնարավորությունները:

Այսպիսով, մեր առաջարկվող մոտեցմամբ նախքան պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու հարցը պառլամենտի նստաշրջանի օրակարգում ընդգրկելը կձևավորվի մի նոր փուլ՝ փորձագիտական անկախ հանձնաժողովի կողմից գնահատման նախնական փուլ, որի արդյունքներից պարզ կլինի գործընթացի հետագա ընթացքը:

Մասնավորապես, այն բանից հետո, երբ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիրը դատախազության (քրեական հետապնդման մարմնի) կողմից ներկայացվի պառլամենտ, ապա այդ հատուկ հանձնաժողովի կողմից պետք է տրվի վերը ներկայացված երկու չափանիշների պահպանվածության մասին եզրակացություն:

Եթե հանձնաժողովը եզրահանգի, որ պահպանված չեն պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու չափանիշները կամ կան այլ էական հիմքեր, որոնք հիմնավոր կասկած են առաջացնում պատգամավորի նկատմամբ հարուցվող քրեական հետապնդման քաղաքականացվածության մասին, համապատասխան եզրակացություն են տալիս՝ պատճառաբանելով դիրքորոշումը: Նշված դեպքում պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցն այլևս չի ընդգրկվի պառլամենտի նստաշրջանի օրակարգում:

Է անձի նկատմամբ հարուցված (իրականացվող) քրեական հետապնդման և պատգամավորի խորհրդարանական գործունեության կապի բացակայության մասին, և նման պայմաններում, ելնելով պատգամավորի անձեռնմխելիության ինստիտուտն անձնական արտոնության չվերաճելու և այն կանոնակարգող նորմերը խիստ նեղ մեկնաբանելու (կիրառելու) մոտեցումից, քրեական հետապնդում հարուցելուց հետո անձի՝ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդման շարունակության համար անհրաժեշտ չէ Ազգային ժողովի համաձայնությունը. նման պարագայում քրեական հետապնդման շարունակությունը պետք է իրականացվի ընդհանուր կարգով», տե՛ս 2021 թ. դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 4.4.-րդ կետը:

Հակառակ պարագայում, երբ հանձնաժողովը եզրակացնի վերը ներկայացված չափանիշների պահպանվածության և պատգամավորի նկատմամբ հարուցվող քրեական հետապնդման քաղաքական շարժառիթների առերևույթ բացակայության մասին, ապա նրանց եզրակացությունը հիմք կհանդիսանա հարցը պառլամենտի նստաշրջանի օրակարգում ընդգրկելու և պառլամենտի կողմից պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու/չզրկելու համար:

Կարծում ենք, որ նման մեխանիզմի առկայությունը որոշակի օբյեկտիվություն կմտցնի պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու գործընթացում՝ բացառելով «մեծամասնության բռնակալության» ծայրահեղ դրսևորումները՝ քաղաքական դրդապատճառներով պատգամավորների նկատմամբ հետապնդումները:

4. Եզրակացություն

Այսպիսով, պատգամավորի անձեռնմխելիությունն ինքն իրենով հանդես է գալիս իբրև ժողովրդի անձնավորված և ապանձնավորված քաղաքական կամքի իրացման կարևոր երաշխիք: Քաղաքական մեծամասնության կողմից հանրային շահի պաշտպանությունից շեղվելու, ժողովրդի բարձր շահերը այսրոպեական և նեղ անձնային-կուսակցական շահերին ստորադասելու պայմաններում, անձեռնմխելիությունն ուղղված է ապահովելու պատգամավորի ներկայացուցչական գործառույթներն ինքնավար կերպով իրականացնելու հնարավորությունը:

Այն կարևոր երաշխիք է նաև մեծամասնության շարքերում գտնվող պատգամավորի համար՝ «մեծամասնության ներսում» ճնշումներին տուրք չտալու տեսանկյունից:

Պատգամավորի անձեռնմխելիությունը առանցքային երաշխիք է նաև ժողովրդի անձնավորված՝ իր ներկայացուցիչների կերպարանքով արտահայտված քաղաքական կամքի պաշտպանության համար, որով նաև կանխարգելվում են անձի պասիվ ընտրական իրավունքի խախտման վտանգները:

Հետևաբար, բոլոր այն պնդումները, թե ներկա ժամանակներում այն կորցրել է իր նշանակությունը, թե զարգացած ժողովրդավարության

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 2(110)2023 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

երկրներում այդ ինստիտուտով հետապնդվող նպատակին կարելի է հասնել այլ կերպ (օրինակ կայացած դատական համակարգի միջոցով), պետք է դիտարկել իբրև ոչ հիմնավոր և որոշ չափով անգամ՝ իրականությունից կտրված:

Մյուս կողմից, սակայն, որպեսզի ինստիտուտը ծառայի իր նպատակին և որպես երաշխիք իրապես կենսագործվի, անհրաժեշտ է, որ սահմանված անձեռնմխելիությունից զրկելու որոշ օբյեկտիվ չափանիշներ և պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու գործընթացը դուրս բերել միայն մեծամասնության որոշմամբ լուծվելիք հարցի տրամաբանությունից: Այդկերպ կբացառվի պատգամավորի անձեռնմխելիության զրկումը միայն մեծամասնության քաղաքական, այդ թվում՝ այսրոպետական շահերով պայմանավորված որոշման հիման վրա՝ բացառելով պատգամավորի անձեռնմխելիության զուտ ձևական բնույթ կրելը և ապահովելով ինստիտուտի՝ իր նպատակային նշանակության գործարկումը՝ որպես արդյունք չեզոքացնելով մեծամասնության կառավարումը «մեծամասնության բռնակալության» վերաճելու ռիսկերը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. **Հակոբյան Լ., Սողոմոնյան Ա., Ռաֆայելյան Վ.**, Ժողովրդավարությունը և ընտրությունները. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում, 2022, Լ. Հակոբյան, Ա. Սողոմոնյան, Վ. Ռաֆայելյան: Եր., «Հայրապետ» հրատարակչություն:
2. **Ахтенберг Н., Бадура П., Бекенфёрде Е.В., Гек В.К., Глезер В.Ш., Герцог Р., Изензее Я., Киминних О., Кляин Г, Куниг Ф., Левер В., Манер Г., Рёллеке Г., Хеберле Л., Хенке В., Цахер Х.В., Цее В., Шлаих К., Шмидт-Асман Е., Шредер М.** Государственное право Германии (1994). Сокращенный

- перевод с немецкого семитомного издания. Т. 1 / Отв. ред. Топорнин Б.Н. - М.: Изд-во ИГиП РАН.
3. **Матьё Б.** Право против демократии? Монография / Б. Матьё, пер. с франц. Я.И. Лебедевой, под ред. А. И. Ковлера. - Москва: Норма: ИНФРА-М, 2021.
 4. **Мельников Е.** (2017). Уголовное преследование в условиях действия системы разделения властей (досудебное производство), дисс. ...канд. юрид. наук. – Москва.
 5. **Эсмен А.** (1898). Общие основания конституционного права. Пер. с фр. под ред. проф. В. Дерюжинского. - Санкт-Петербург.
 6. **Barak A.** (2009). The Judge in a Democracy. Princeton University Press. Հղում՝ <https://www.perlego.com/book/734391/the-judge-in-a-democracy-pdf> (վերջին մուտքը՝ 30.05.2023 թ.).
 7. **Blokker P.** (2019). Populism as a constitutional project. International Journal of Constitutional Law, 17(2), 536–553. doi: 10.1093/icon/moz028.
 8. **Doyle O., Walsh R.** (2021). Deliberative Mini-Publics as a Response to Populist Democratic Backsliding. In M. Cahill, C. O'Cinneide, S. ÓConaill, & C. O'Mahony (Eds.), Constitutional change and popular sovereignty: Populism, politics and the law in Ireland. London, New York: Routledge.
 9. **Hardt S.** (2013). Parliamentary immunity: a comprehensive study of the systems of parliamentary immunity of the United Kingdom, France and the Netherlands in a European context. [Doctoral dissertation, Maastricht University]. Maastricht University. <https://doi.org/10.26481/dis.20130926sh> հղում՝ <https://cris.maastrichtuniversity.nl/ws/portalfiles/portal/1439730/guid-55b44d63-b482-4e81-b66e-cfc1a4cef467-ASSET1.0.pdf> (վերջին մուտքը՝ 30.05.2023 թ.).
 10. **Klatt M.** (2022). Democracy in 2030. In C. Bezemek (Ed.), Constitutionalism 2030 (pp. 14). Oxford: Hart Publishing.
 11. **Rahat G.** (2022). Party Types in the Age of Personalized Politics. Perspectives on Politics, 1-16. doi:10.1017/S1537592722000366.

12. **Weyland K.** (1996). Democracy Without Equity. University of Pittsburgh Press. Retrieved from <https://www.perlego.com/book/3847269/democracy-without-equity-failures-of-reform-in-brazil-pdf>

13. Venice Commission (2014). CDL-AD(2014)011. հղում՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2014\)011-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2014)011-e) (վերջին մուտքը՝ 30.05.2023 թ.).

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ

1. 2009 թ. հունիսի 30-ի որոշումը ՍԴՈ-810:
2. 2021 թ. դեկտեմբերի 7-ի որոշումը ՍԴՈ-1619:
3. 2022 թ. ապրիլի 29-ի որոշումը ՍԴՈ- 1647:

ՄԻԵԴ Վճիռներ

1. Young, J., & Webster v. the United Kingdom, judgment of 13 August 1981, Series A no. 44, p. 25.
2. Chassagnou and Others v. France [GC], nos. 25088/94, 28331/95 and 28443/95, § 112, ECHR 1999 III).
3. United Communist Party of Turkey and Others v. Turkey, Judgment of 30 January 1998, (case number 19392/92).
4. Refah Partisi (the Welfare Party) and Others v. Turkey, Judgment of 13 February 2003, (case numbers 41340/98 41342/98 41343/98 41344/98).
5. Riza and Others v. Bulgaria, judgment of 13 October 2015, (case numbers 48555/10 and 48377/10).
6. Selahattin Demirtaş V. Turkey (No. 2), GC, judgment of 22 December 2020, (case number 14305/17).

ДЕПУТАТСКАЯ НЕПРИКОСНОВЕННОСТЬ - ВЫМИРАЮЩИЙ ИЛИ НЕОБХОДИМЫЙ ИНСТИТУТ В ПРОЦЕССЕ РЕАЛИЗАЦИИ ПОЛИТИЧЕСКОЙ ВОЛИ НАРОДА?

Аннотация

В статье раскрывается роль и значение института депутатской неприкосновенности. Авторы критически подходят к вопросу о том, что институт депутатской неприкосновенности теряет свою роль вместе с «демократизацией» стран.

В статье раскрывается происхождение института депутатской неприкосновенности и делается попытка представить связь между депутатской неприкосновенностью и реализацией политической воли народа.

Ключевые слова: депутатская неприкосновенность, политическая воля народа, уголовное преследование.

PARLIAMENTARY IMMUNITY: DYING OR AN INDISPENSABLE INSTITUTION IN THE PROCESS OF REALIZING THE POLITICAL WILL OF THE PEOPLE?

Annotation

The article reveals the role and significance of the institution of parliamentary immunity. The authors critically examine the question whether the institution of parliamentary immunity loses its role together with the "democratisation" of the country.

The article reveals the origin of the institution of parliamentary immunity and attempts to present the connection between parliamentary immunity and the implementation of the political will of the people.

Keywords: parliamentary immunity, political will of the people, criminal prosecution.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 28.06.2023թ., փրվել է գրախոսության 29.06.2023թ., ընդունվել է տպագրության 03.07.2023թ.: